ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին

11 հուլիսի 2024թ. գ. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով թիվ ԵԴ2/36978/02/23 քաղաքացիական գործն ըստ հայցի «Աջափնյակ քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության՝ «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Աջափնյակ քոնսթրաքշն» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2023թ. նոյեմբերի 6-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության՝ «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր Ա. Բաղիրյան) 2023թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ:

Թիվ ԵԴ2/36978/02/23 քաղաքացիական գործը 2024թ. հունիսի 25-ին մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին, որը դատավորի աշխատակազմին է տրամադրվել 2024թ. հուլիսի 8-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ըստ հայցի «Աջափնյակ քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության՝ «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-

ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/36978/02/23 քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/36978/02/23 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. օգոստոսի 21-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ